<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> N 06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **09.09.2022թ.**

2022 թվականի սեպտեմբերի 09-ին տեղի ունեցավ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստ:

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն նախագահ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար

Գ. Սահակյան - խորհրդի քարտուղար

Ա. Կոտոյյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ա. Բաբայան - «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար

Բացակայում էին՝

Լ. Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու

Քվեարկության օրակարգային հարցեր.

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:

1.1 Բնական գազի, էլեկտրաէներգիայի և բջջային կապի նկատմամբ պետական վերահսկողության միջազգային փորձի ուսումնասիրություն:

1.2 Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցություն:

Զեկուցող՝ Ա. Կոտոլյան

2. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում փոփոխություն կատարելուն:

Զեկուցող՝ Ա. Կոտոլյան

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելուն:

Զեկուցող՝ Ա. Ասոյան

4. Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինի, դիզելային և նավային վառելիքի, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի և մազութի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ 2022 թվականի 8 ամիսներին իրականացված ստուգումների արդյունքների, ինչպես նաև բենզինի լաբորատորիաի հավատարմագրման գործընթացի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Զեկուցող՝ Ա. Կոտոլյան

5. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների հաշվետվության ներկայացում:

Զեկուցող՝ Ա. Սարգսյան

6. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը:

Զեկուցող՝ Ա. Սարգսյան

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

8. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
Զեկուցող՝ Ա. Կոտոյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստին ներկա էին խորհրդի անդամների 2/3-ից ավելին՝ նիստը համարվեց կայացած:

Խորհրդի անդամները միաձայն քվեարկությամբ հաստատեցին օրակարգը:

1. Քննարկվեց օրակարգի հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ.

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկուցեց Արմեն Կոտոյանը, բովանդակային ներկայացրեց.

1.1 Բնական գազի, էլեկտրաէներգիայի և բջջային կապի նկատմամբ պետական վերահսկողության միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները:

Տեսչական մարմնի ղեկավարը հայտնեց, որ բնական գազի, էլեկտրոէներգիայի և բջջային կապի նկատմամբ պետական վերահսկողություն որևէ կառույցի, այդ թվում Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից չի իրականացվում:

Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N 74 որոշմամբ հաստատված «Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված բնական այրվող գազի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 046/2018) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ 2023 թվականից վերահսկողություն է իրականացնելու ՇՎՏՄ-ն: Բնական այրվող գազի նմուշառում իրականացնելու համար անհրաժեշտ է ստանդարտով սահմանված հատուկ կահավորված վայր: ՀՀ-ում առկա է այդպիսի 3 վայր՝ Լոռու, Սյունիքի և Արարատի մարզերում՝ համապատասխանաբար ռուսական, պարսկական գազի և դրանց խառնուրդից նմուշառում իրականացնելու համար: Նմուշառման համար անհրաժեշտ է նաև համապատասխան սարք՝ պայմանավորված գազատարի տրամաչափից, իսկ գազի լաբորատոր փորձաքննության սարքի գինը կազմում է մոտ 20 մլն. դրամ:

Բջջային կապի մասով հայտնեց, որ ուսումնասիրվել է Եվրոմիության փորձը: Այն իրականացնում է մասնավոր կազմակերպություն՝ այդ երկրի պատվերով: Բջջային կապի ուսումնասիրությունը իրականացվում է հատուկ թանկարժեք սարքավորումներով

կահավորված մեքենայի միջոցով: Այս ուսումնասիրությունը իրականացվում է 3-ից 4 տարին մեկ անգամ՝ պայմանավորված այդ ծառայության թանկարժեք լինելով:

Էլեկտրաէներգիայի մասով հայտնեց, որ նույնպես ուսումնասիրվել է Եվրոմիության փորձը: Էլեկտրաէներգիայի մատակարարը շուրջօրյա հետևում և պահպանում է Էլեկտրաէներգիայի հետ կապված տվյալները: Բողոքների դեպքում սպառողը դիմում է մատակարարին: Սպառողի պահանջը մերժվելու դեպքում վերջինս կարող է դիմել դատարան:

Վահան Քերոբյանը առաջարկեց մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրել և ըստ ոլորտների իրականացված քննարկումների ներկայացնել առաջարկություններ վերահսկողության մեթոդների վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր ոլորտում վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների վերաբերյալ ներկայացնել մանրամասն տեղեկատվություն:

1.2 Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցության մասին:

ՀՀ ՊԵԿ-ի համակարգին օնլայն հասանելությունն ապահովելու վերաբերյալ հանձնարարականին Տեսչական մարմնի ղեկավարը հայտնեց, որ նպատակ ունենալով բարձրացնել ՇՎՏՄ-ի վերահսկողական գործառույթների արդյունավետությունը պետական եկամուտների կոմիտեի հետ քննարկման արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության տարածք ոչ պարենային արտադրանք ներմուծած տնտեսվարող սուբյեկտներին ծանուցել տեղեկատվություն այն մասին, որ վերջիններիս կողմից ներմուծված ոչ պարենային արտադրանքը ենթակա է տեխնիկական կանոնակարգման:

Վահան Քերոբյանը առաջարկեց ՊԵԿ-ի հետ համագործակցության արդյունքում վերահսկման ենթակա յուրաքանչյուր ներմուծված արտադրանքի մասով իրազեկել տվյալ տնտեսավարող սուբյեկտին:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ ի գիտություն ընդունվեց նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննակումը:

2. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում փոփոխություն կատարելուն հավանություն տալու վերաբերյալ.

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը ներկայացրեց Տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը և քննարկման արդյունքում այն արժանացավ հավանության:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հավանություն տալ Տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում փոփոխություն կատարելուն:

3. Քննարկվեց օրակարգի հարց՝ Տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելուն հավանություն տալու վերաբերյալ.

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը ներկայացրեց Տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելու մասին հարցը և քննարկման արդյունքում այն արժանացավ հավանության:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հավանություն տալ Տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելուն:

4. Քննարկվեց օրակարգի հարց՝ ավտոմոբիլային և ավիացիոն բենզինի, դիզելային և նավային վառելիքի, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի և մազութի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ 2022 թվականի 8 ամիսներին իրականացված ստուգումների արդյունքների, ինչպես նաև բենզինի լաբորատորիայի հավատարմագրման գործընթացի ամփոփ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց ավտոմոբիլային և ավիացիոն բենզինի, դիզելային և նավային վառելիքի, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի և մազութի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ 2022 թվականի 8 ամիսներին իրականացված ստուգումների արդյունքների, ինչպես նաև բենզինի լաբորատորիայի հավատարմագրման գործընթացի ամփոփ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ հարցի քննարկումը տեղափոխել Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ ավտոմոբիլային և ավիացիոն բենզինի, դիզելային և նավային վառելիքի, ռեակտիվ

8 ամիսներին իրականացված ստուգումների արդյունքների, ինչպես նաև բենզինի լաբորատորիայի հավատարմագրման գործընթացի ամփոփ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ հարցի քննարկումը տեղափոխվեց Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

5. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների հաշվետվության ներկայացում.

Վահան Քերոբյանը առաջարկեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների հաշվետվության քննարկման հարցը տեղափոխել Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների հաշվետվության քննարկման հարցը տեղափոխվեց Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

6. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը հատատելու վերաբերյալ:

Վահան Քերոբյանը առաջարկեց Տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը հատատելու հարցը տեղափոխել Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ Տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը հատատելու վերաբերյալ հարցը տեղափոխվեց Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

7. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հատատելու վերաբերյալ:

Վահան Քերոբյանը առաջարկեց Տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հատատելու հարցը տեղափոխել Տեսչական մարմնի

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ Տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հատատելու վերաբերյալ հարցը տեղափոխվեց Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

8. Քննարկվեց օրակարգի վերջին հարցը՝ հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթվի համաձայնեցման վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի սեպտեմբերի 23-ին-ին ժամը 13:30-ին:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 13:30-ին:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Վ.Քերոբյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ **Գ.Սահակյան**

ստորագրություն